Լավատես լինենք

Չգիտեմ, թե ինչի հետ կարելի է համեմատել ծննդավայրի կարոտն ու քաղցրությունը, մանավանդ եթե դեպքերի բերումով դու այլևս այնտեղ չես ապրում: Քո սրտի ու մտքի ակունքներին, մայրական օրորի հանգով, շարունակում են հնչել մանկության և պատանեկության տարիների ոսկեվարս հեքիաթները: Եվ դու ուխթը բաց չես թողնում այցելության գնալու քո արմատներին: Ու ի՞նչ անհամբերությամբ: Գնում ես, քայլում ծանոթ արահետներով, և նորից ու նորից համոզվում ես, որ քո ծննդավայրի օդն ու ջուրը, անտառներն ու սարերը ուրի՞շ են, յուրահատուկ համ ու հոտ ունեն: Իսկ եթե այդ գյուղի գերեզմանատանը հանգչում են նաև քո ծնողները, հարազատներ ու ընկերներ, ուրեմն դու այցելության ես գնում ոչ միայն քո հայրական օջախին, ասես նաև անմոռաց մի սրբավայրի դուռ ես բացում: Եվ քո ծանոթ ու անծանոթ համագյուղացիների հետ խոսք ու զրույց փոխանակելուց, այս աշխարհից գնացածների հիշատակին սիրո և հարգանքի տուրք մատուցելուց հետո վերադառնում ես քո նոր տունը՝ թեթևացած, հոգեպես մաքրված: Վերադառնում ես՝ հաջորդ հանդիպման հույսը քո սրտի ծալքերում պահած: Եվ այսպես՝ տարիներ շարունակ, մինչև որ վրա է հասնում անխուսափելին...

Իմ Գետաշենը Հյուսիսային Արցախի ամենախոշոր գյուղերից է: Եղել է և մնում է: Գյուղի տարեց մարդկանց վկայությամբ մեր նախնիները եկել են Ղարաբաղի Հաթերք, Մոխրաթաղ և այլ գյուղերից: Ե՞րբ, դժվար է ասել: Ամենաստույգ վկայագրերը գտնվում են գյուղի գերեզմանատանը: Դրանք կիսամաշ կամ երկու կես եղած խաչքարեր են: Մեկի վրա հազիվ նշմարվում է՝ ՃՂԱ, այսինքն՝ 741 թվական: Ուրեմն Գետաշենն ամենաքիչը 1200 տարեկան է: Անհարմար չլինի հարցնելը, այդ ժամանակ որտե՞ղ էին այսօր իրենց այդ հողերի տերը կոչող ադրբեջանցիները...

Գյուղից ոչ շատ վերև, անտառի փեշերին, փռվել-տարածվել է մեր հրաշք Կապույտ լիճը, երևի բնության ամենաշքեղ ստեղծագործություններից մեկը, որի անունը, գյուղի անվան նման (Չայքենդ) քարտեզներում և պաշտոնական թղթերում երևում է թուրքերեն թարգմանությամբ՝ Գյոյ-գյոլ: Մեր անվանի պատմիչ Կիրակոս Գանձակեցին իր «Պատմություն հայոց» գրքում նկարագրում է 1139 թվականի ահավոր երկրաշարժը, որը և պատճառ է դարձել Կապույտ լճի առաջացման: «... Եղև շարժ սաստիկ և կործնեցաւ քաղաքն Գանձակ, և տապալեցան շինուածք, որ ի նմա, ի վերայ բնակչաց իւրոց... Փլաւ և լեառն Ալհարակ ի շարժմանէն և արգել զձորակն, որ անցանէր ընդ մէջ նորա, և եղև ծովակ, որ է մինչև այսօր: Լինի ի նմա ձկունք ազնիվք»: (Նկատի ունի կարմրախայտ ձուկը): Բայց չգիտեմ ինչու ես համոզված եմ, որ այդ «ազնիվք» գնահատականը առաջին հերթին վերաբերում է հալալ քրտինքով ապրող իմ համագյուղացիներին:

Նաև մի շատ հին ավանդություն կա գյուղի վերևում, Դեգատեղերի վրա կախված Ղուզքարի մասին: Իբր թե հին ժամանակներում մի աժդահա ու դաժան մարդ է եղել, անունը Օղուզ, այսինքն՝ անկուշտ: Սա ուզում է ամուսնանալ մեր գյուղի աղջիկներից մեկի հետ: Մերժում են, չեն տալիս: Օղուզը որոշում է ոչնչացնել գյուղը: Էդ հսկա ժայռը շալակած բերում է, որ շուռ տա գյուղի վրա: Մեր մեծ սուրբ Պանդը, էս բանը որ տեսնում է, խղճում է գյուղին ու մըտրակի մի հարվածով Օղուզին քար է դարձնում: Էդպես էլ մնացել է, քարի տակ կռացած: Շղթաներն էլ են երևում, որոնցով շալակել է ժայռը...

Գյուղի միջով հոսում է Քուրակ գետը: Այստեղից էլ՝ գյուղի անունը, Գետաշեն: Արևառատ օրերին, երբ Բրուտի հարթից նայում ես ներքև, գետն ասես արծաթե գոտի լինի՝ գյուղի մեջքին կապած...

Երվանդ Լալայանի տվյալներով, անցյալ դարավերջին Գետաշենում 446 տնտեսություն է եղել՝ 2558 բնակչով: Անցյալ դարի վաթսունական թվականներից գյուղն ուներ իր երկդասյա պետական-արքունական (ռուսական) դպրոցը, նաև՝ ծխական դպրոց: «Մշակի» վկայությամբ 1895 թ. գյուղում կար մանկական գրադարան՝ 170 կտոր գրքային ֆոնդով:

Վերջին պատերազմից առաջ Գետաշենում ապրում էր ավելի քան 2000 տնտեսություն: Պատերազմ են մեկնել 1800 հոգի, որոնցից մարտի դաժան ճամփաներին են մնացել 865 երիտասարդ: Գյուղի նախադռանը, Կալերի մոտ, փառահեղ հուշարձան է կառուցվել զոհվածների հիշատակին: Հենց այդտեղ, Կալերում էլ վայրէջք է կատարում շըրջափակման ու շրջապատման մեջ գտնվող գյուղի միակ կապող օղակը՝ ուղղաթիռը: Համոզված եմ, իմ նահատակված համագյուղացիները դառնությամբ հարցնում են՝ մի՞թե մեր ջահել կյանքը տվել ենք այսօրվա համար...

Գետաշենը տվել է ավելի քան 100 գիտության թեկնածուներ, 5 դոկտոր-պրոֆեսոր: Իսկ ճարտարապետներ, բըժիշկներ, ուսուցիչներ... Արժե՞ շարունակել թվարկումը: Գուցե բավական կլինի ասել, որ Գետաշենը շեն ու անվանի գյուղ է, հայկական մի մեծ ու սուրբ օջախ:

Եվ այսօր, վերակառուցման և դեմոկրատիա կոչվածի պայմաններում, ահավոր սև ամպեր են կուտակվել իմ Գետաշենի գլխին: Նոր օղուզներ են հրապարակ ելել, ուզում են կործանել գյուղը, միայն այն պատճառով, որ նա հայկական է: Կանգ չեն առնում ոչ մի բանի առաջ: Սրբավայր Պանդն էլ անզոր է նրանց քար սիրտը քարացնելու... Գուցե բավարարվենք մի պերճախոս օրինակով միայն: «Մոլոդոժ Ազերբայջանա» թերթի այս տարվա համարներից մեկում տպագրված է ոմն Շարիֆովի հոդվածը, որտեղ ասված է. «... Հայաստանում այդ գյուղի Չայքենդ անունը վերափոխել են իրենց ձևով, դարձրել Գետաշեն»: Ուրեմն մե՞նք ենք թարգմանել: Երևի այսպիսի դեպքերի համար է ասված՝ չգիտես խնդաս, թե լաս...

Հիմա Գետաշենում հազար տնտեսություն կա: Ամուր նստած պահում են գյուղը: Մոտ այդքան ընտանիք էլ Երևանում է ապրում. սա էլ երևանյան Գետաշենն է: Իսկ եթե հաշվենք նաև Աբովյանի, Արթիկի, Սևանի և հանրապետության այլ շրջաններում ու միութենական քաղաքներում ապրող գետաշենցիներին, կստացվի ավելի քան երեք հազար տուն, տասը հազար բնակչություն:

Մի իսկական գյուղ-քաղաք: Բայց, հասկանալի է, ամենամեծ ծանրությունն ընկնում է գյուղում ապրողների, գյուղը պահողների վրա: Հա[illegible] մենք աշխատում ենք գո[illegible]վից կանգնել գյուղին, օգնում ենք ինչով կարող ենք: Դըժբախտաբար այդ օգնությունն ի զորու չէ հարցի արմատական լուծումն ապահովելու համար: Գյուղը վաղուց է գտնվում Շահումյանի շրջանի մեջ մըտնելու խնդրանքով: Լռում են իրավասու մարմինները: Դե, միշտ այդպես է. քո առաջարկն իրենց սրտովը չեղավ, խուլ ու համրի դիմակ կհագնեն... Եթե Ղարաբաղի խընդիրը փակուղու է հանգիպել, մի գյուղի հարց կարո՞ղ է նըրանց հետաքրքրել, առավել ևս՝ անհանգստացնել: Լավ է ասում իմ մանկության ընկերներից մեկը. «Ախր ինչու պետք է մենք էսպես անտեր մնայինք: Ժամանակին Գետաշենը Ղարաբաղի կազմից դուրս թողնողի մեջքը կոտրվի...»:

Միևնույն է, լավատեսությունը չի լքում իմ համագյուղացիներին: Նրանք համոզված են, որ վաղ թե ուշ Գետաշենը, Շահումյանի շրջանի հետ, Արցախի կազմում կմիանա մայր Հայաստանին:

Երա՞նի այդ օրվան:

Գրիգոր ԲԱԼԱՍԱՆՅԱՆ